

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ.

Ֆ. ԴՈՍՏՈՆԵՎՍԿԻ-ՐԱՖՖԻ-Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

Ֆյոդոր Դոստոևսկու ծննդյան 200-ամյակի առթիվ*

Բանալի բառեր – Դոստոևսկի, Րաֆֆի, Տեմիրճիպաշյան, զուգահեռներ, ազգային, համամարդկային, օրագիր, ոճիր, պատիժ, խիղճ, դավաճանություն, տառապանք:

Մուտք

Վիթխարի է Ֆյոդոր Դոստոևսկու անհատականության և ստեղծագործության ազդեցությունը ռուս և համաշխարհային գրական-գիտական մտքի զարգացման վրա: Ֆ. Դոստոևսկու գրական վաստակի հետազոտողները նշել են նրա ազդեցությունը այնպիսի մեծությունների վրա, ինչպիսիք են Կ. Համսունն ու Հ. Հեսսեն, Ու. Ֆոլկներն ու Է. Հեմինգուեյը, Ա. Կամյուն ու Բ. Պաստեռնակը, Ժ.-Պ. Սարտրն ու Հ. Բյոլը և շատ ուրիշներ:

Բացառություն չէ նաև հայ գրականությունը՝ իր պատմականորեն ձևավորված երկու ճյուղերով: Անցյալ դարի 80-ական թթ. սկզբին հրատարակած աշխատություններից մեկում գրականագետ Մկրտիչ Մկրյանը նկատում է. «Ճիշտ է, արևելահայ գրողները շփում ունեին ավելի շատ ռուս գրականության, իսկ արևմտահայ գրողները՝ արևմտաեվրոպական, առանձնապես ֆրանսիական գրականության հետ, բայց այդ հանգամանքը չպետք է բացարձակության վերածել, մանավանդ որ ռուս գրականությունը և հասարակական միտքը մեծ տեղ և հետաքրքրություն ունեին նաև արևմտահայ իրականության մեջ, ինչպես և արևմտաեվրոպականը՝ արևելահայ իրականության մեջ»¹: Հայ գրականագիտությունը տարբեր ժամանակներում նշել է մի շարք հայ գրողների ստեղծագործական կյանքում Ֆ. Դոստոևսկու ունեցած դերի ու նշանակության մասին: Ճանաչված գրող, հրապարակագիր, Ֆ. Դոստոևսկու երկերի լավագույն թարգմանիչներից Կարալիս Սուրենյանը հավաստում է, որ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.04.2022:
1 Սկրյան Մ., Գրականության պատմության հարցեր, Եր., ԵՊՀ հրատ., 1982, էջ 253:

այսօր աշխարհի շատ մեծեր (իսկ հայ գրականության մեջ, օրինակ, Նար-Ռոսը) «կամա թե ակամա, ուղղակի կամ անուղղակիորեն, խոստովանեն կամ ոչ, ինչ-որ բանով պարտական են Դոստոևսկու արվեստին կամ աշխարհագագացողությանը, նրա նորարարության բաց արած հնարավորություններին»²: Կարևոր է նշել նաև այն, որ դեռևս 1893 թ., երբ, ըստ էության, Ռուսաստանում նոր էր սկիզբ առնում ժողովուրդների գրական-մշակութային փոխադարձ ճանաչողության խթանման, այդ համատեքստում նաև հայ գրականությունը ռուս հանրությանը ներկայացնելու գործընթացը, Մոսկվայում հրատարակված «Армянские беллетристы» ժողովածուի առաջաբանում (խմբագիրներ՝ Յուրի Վեսելովսկի և Մինաս Բերբերյան), բարձր գնահատելով 19-րդ դարում հանդես եկած «մի շարք եռանդուն, եվրոպական գաղափարներով տոգորված, լուսավորության համար պայքարի առաջամարտիկ» հայ գրողների երկերը, նշվում էր, որ հատորում ներկայացված գրեթե բոլոր ստեղծագործություններին բնորոշ է կյանքի իրական պատկերումը՝ երբեմն նույնիսկ չափից դուրս մանրամասն: «Դրանք բոլորը ուշագրավ փաստեր են, որ հարուստ նյութ են տալիս այլ գրականությունների հետ համեմատության և զուգահեռների համար»³, - եզրակացնում էին ժողովածուի հրատարակիչները:

Ներկա հրապարակման նպատակն է անդրադառնալ հայ գրականության երկու ճյուղերը ներկայացնող երկու ինքնատիպ հեղինակների՝ **Րաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան)** և **Եղիա Տեմիրճիպաշյանի** ստեղծագործության՝ Դոստոևսկու ստեղծագործության հետ ունեցած զուգահեռներին, որոնք, կարծում ենք, կարոտ են բազմակողմանի և ամբողջական լուսաբանման:

1. Դոստոևսկի և Րաֆֆի. ստեղծագործական զուգահեռներ

Միանգամից ասենք, որ մեր դիտարկման հիմքում գլխավորապես գրականության մեջ **ազգայինի և համամարդկայինի փոխհարաբերության** խնդիրն է, որն էլ ազգային որևէ գրողի ստեղծագործությունը համաշխարհային մեծերի հետ փոխառնչությունների համատեքստում քննելու հնարավորություն է տալիս: Նման շեշտադրումը կարևոր է՝ նկատի ունենալով, որ բարդ ու մինչև անգամ ողբերգական ճակատագիր ունեցող ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի գրականությունը, բնականաբար, շատ դեպքերում դիտարկվել և վերլուծվել է նախ և առաջ հենց ազգային-պատմական, սոցիալ-քաղաքական հիմնահարցերի համատեքստում՝ ականա շրջանցելով համամարդկային բովանդակությունն ու խորքը: Այս առումով ուշա-

2 Սուրենյան Կ., Խոջի աղաղակ (Ֆ. Մ. Դոստոևսկու կյանքն ու ստեղծագործությունը), **Դոստոևսկի Ֆ.**, Կարամազով եղբայրներ, հատ. 2, Եր., «Սով. գրող», 1984, էջ 637:

3 «Армянские беллетристы», т. 1, М., «Типо-литогр. И. Н. Кушнерев и Ко», 1893, с. VII-VIII.

գրավ է, որ, խստորեն քննադատելով անցյալ դարի 30-ական թթ. Հայաստանում գաղափարական նկատառումներով Բաֆֆու ստեղծագործությունը մերժող, նրան ծայրահեղ ազգայնականության մեջ մեղադրողների տեսակետները, Ալեքսանդր Ֆադեևը գրում էր. «Ընթանալով մի քանի հայ ընկերների ուղիով՝ պետք կլինեք ռուսական կլասիկ ժառանգությունից դուրս շարտել Լև Տոլստոյին՝ որպես արմատացած հետադիմականի, առավել ևս Դոստոևսկուն՝ որպես անուղղելի խավարամոլի»⁴:

Արձակագիր, գրականագետ Հակոբ Օշականը ևս, նկատելով, որ «մեր գրականության, ավելի ճիշտը մեր գրողներուն պաշտամունքը նույնացուցած ենք ազգասիրության պարտքի մը հետ», նաև նկատում էր, թե «Ավելի քան ստույգ է, որ հարյուր տարի առաջ ընթերցողը խանդավառող քերթված մը հարյուր տարի վերջ չի կրնար մեռնիլ, եթե երբեք իր մեջը ունի կյանքի հավիտենական խմորեն փշրանք մը բան»⁵: Իրողություն, որը, համոզված ենք, առավել վառ դրսևորվում է համաշխարհային գրական մեծերի ստեղծագործության հետ ներքին առնչությունները կամ ընդհանրությունները բացահայտելիս: Այսօր, իհարկե, դժվար է ասել, թե Բաֆֆին և Եղիա Տեմիրձիպաշյանը որքանով էին ծանոթ, մասնավորապես, Ֆյոդոր Դոստոևսկու ստեղծագործությանը: Բաֆֆու պարագայում, օրինակ, հայտնի է, որ նա լավատեղյակ էր համաշխարհային և ռուս գրականությանը՝ Հոմերոսից մինչև Պուշկին և Դոստոևսկի: Ինչ վերաբերում է արևմտահայ իրականությանը, ապա այստեղ հիշատակելի է, օրինակ, Լևոն Բաշալյանի՝ հենց Ֆյոդոր Դոստոևսկու կյանքի և ստեղծագործության մասին դեռևս 1885 թվականին գրած «Տասթայելսքի եւ իւր գործերն» ծավալուն հոդվածը, որն անկասկած չէր կարող վրիպել նաև Եղիա Տեմիրձիպաշյանի ուշադրությունից: Նկատելով, որ «Տասթայելսքիի անունը», ըստ էության, տարածված չէր արևմտահայության մեջ, Լ. Բաշալյանը գրում էր. «Եւ սակայն Տասթայելսքի մին էր այն մեծ մատենագիրներէն որք ամենախորին ազդեցութիւն ունեցան իրենց հայրենակցաց վրայ: Արդէն Ռուսք իրենց վիպասանաց մէջ առաջին կարգը կը դասեն զայն, շատ վեր Թուրկէնէֆէն որ կ'սկսի սնոցուիլ, և Թուլսթոյէն»⁶: Կարծում ենք՝ տվյալ դեպքում արդեն կարող ենք խոսել Ֆ. Դոստոևսկուց Բաֆֆու և Ե. Տեմիրձիպաշյանի ոչ այնքան ուղղակի, որքան անուղղակի ազդեցությունների, ավելի ճիշտ՝ **զուգահեռների** մասին:

Բաֆֆու հանրահայտ երկերը, հայության կյանքի ու ձևկատագրի հզորագույն արտահայտիչը լինելով, նրա համար ապահովել են «Հայոց «ազգային վիպասանը» կոչվելու» (Ա. Չոպանյան) իրավունքը. այլ կարծիք լինել չի կարող: Բայց եթե ազգայինի խնդիրը, բնականաբար, տարակարծություն չի

4 **Фадеев А.**, Коммунистическое воспитание трудящихся и советское искусство, За тридцать лет, М., «Сов. писатель», 1959, с. 207-208.

5 **Օշական Հ.**, Երկեր, Եր., «Սով. գրող», 1979, էջ 381:

6 **Բաշալյան Լ.**, Տասթայելսքի եւ իւր գործերն, «Մասիս», Կ. Պոլիս, 1885, N 3754, էջ 634:

առաջացնում, ապա այսօր էլ թերևս նույնքան արդիական է դեռ 1935 թ.՝ մեծ գրողի 100-ամյակի օրերին, Արշակ Չոպանյանի հնչեցրած հարցը, թե «Համա-մարդկային տեսակետով Րաֆֆի գործերը ունի՞ն գրական բարձր արժեք մը»⁷: Հարցի իր պատասխանը Չոպանյանը խարսխում էր գլխավորապես Րաֆֆու երկերի բովանդակային հատկանիշներին՝ գտնելով, որ «բունն հայ-րենասերը, որ կար ու կտիրեր Րաֆֆիի մեջ, զուտ գեղեցկագիտական տեսա-կետով՝ վնասած է որոշ չափով անոր տաղանդին ավելի վճիտ, անխառն, կատարյալ ձևով զարգանալուն»⁸: Ըստ էության, Չոպանյանը կրկնում էր իրե-նից շուրջ երկու տասնամյակ առաջ Հովհ. Թումանյանի արտահայտած հայտ-նի միտքը, թե «մի Րաֆֆի, մի Գամառ-Քաթիպա, մի Աղայան» շատ ավելին կարող էին տալ, քան «տվել են, եթե նպաստավոր հանգամանքներում լի-նեին»⁹:

Այնուամենայնիվ, Րաֆֆու ստեղծագործությունը ոմանք դիտարկել են նաև իր ժամանակի համաշխարհային գրականության համատեքստում: Դեռևս 1913 թվականին Րաֆֆու մահվան 25-րդ տարելիցի կապակցությամբ Դանիել Վարուժանը գրել է. «Րաֆֆիի հայ վիպագրութեան հայրը եղաւ. մեր Սքօթը, եթէ կ'ուզէք, որ կրցաւ կենդանի կերպով ոգեկոչել անցեալը և մար-գարէանալ ապագան»¹⁰: Ա. Չոպանյանը կարծում էր նաև, որ Րաֆֆու մի քա-նի երկեր, ինչպես՝ «Սամվելը», «Խենթը», «Հարեմը», «Ոսկի աքաղաղից», «Կայծերից» և «Դավիթ Բեկից» մի շարք էջեր, կարող են օտար ընթերցողին ներկայացվել «իբր մեծատաղանդ հայ բանաստեղծ վիպասանի մը գործեր ... և գտնել ջերմ ընդունելություն»¹¹: Ընդ որում, նա, թեև որոշ վերապահույթ-յամբ, բայց Րաֆֆու անունը դնում էր Դիկենսի, Բալզակի, Տոլստոյի, նաև Դոստոևսկու անունների կողքին: Այս ամենը, իհարկե, պատահական չէր: Նման մոտեցման ու տեսակետների համար հիմքեր տալիս է հենց Րաֆֆու ստեղծագործությունը՝ այն իր ամբողջության մեջ ոչ միայն ազգային, այլև համամարդկային գաղափարների արծարծման, ինչպես նաև գրողի ստեղ-ծագործական մտածողության մակարդակի տեսանկյունից քննելիս:

Րաֆֆին համոզված էր, որ «գեղարվեստը միայն գեղարվեստի համար» սկզբունքը չի խոստանում արդյունավետություն, քանի որ «գեղարվեստը միայն այն ժամանակ պետք է կատարյալ համարել, երբ արհեստի գեղեց-կության հետ միանում են բարձր, վսեմ և հանրամարդկային գաղափար-ներ»¹²: Եվ իրոք, Րաֆֆու երկերում գործող, ապրող ու շնչող հերոսները՝ թեև երբեմն նաև գրողի կողմից հորինված, սուկ հեղինակի գաղափարների խո-սափողները չեն, այլ կենդանի, լիարյուն կերպարներ: Դեռևս 19-րդ դարի

7 Չոպանյան Ա., Րաֆֆի, Երկեր, Եր., «Սով. գրող», 1988, էջ 714:

8 Նույն տեղում, էջ 715:

9 Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հատ. 4, Եր., «Հայաստան», 1969, էջ 265:

10 Վարուժան Դ., Րաֆֆի, «Ամսօրեայ տեղեկատու», Կ. Պոլիս, 1913, N 27, էջ 40:

11 Չոպանյան Ա., նշվ. աշխ., էջ 715:

12 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 11, Եր., «Նաիրի», 1991, էջ 389:

վերջին տասնամյակի սկզբներին լրագրող, գրականության պատմաբան Ե. Նեկրասովյան Մոսկվայի «Ռուս դպրության սիրողների ընկերության» նիստում կարդացած հրապարակային դասախոսության մեջ նշում էր, որ «Րաֆֆին միշտ ոչ միայն ճշգրտապատում բարքովարք նկարագրող է, այլ և իսկական արուեստատեր, որի գրչի տակ մարդիկ հանդես են գալիս որպես կենդանի էակներ, և ընթերցողը մոռանում է, թե այդ միայն հեղինակի ստեղծագործած պատկերներ են...»¹³:

Այստեղ է, որ դարձյալ երևում է Րաֆֆի գրող-արվեստագետի՝ ազգայինի սահմաններից դուրս ճառագող տաղանդի մեծությունը: Նա կարողանում էր թափանցել քննվող բարդ երևույթների խորքերը՝ մասնավորապես ազգայինի հիմքում տեսնելով որևէ անհատի համընդհանուր մարդկային էությունը. «Ինչ մարդ որ չէ ճանաչում և չէ սիրում յուր ազգայնությունը, նա վերջանում է մարդ լինելուց»¹⁴: Ստեղծում էր կերպարներ, որոնք հայի ազգային դիմագծի և էության միջոցով մերկացնում էին նաև ընդհանրապես մարդ անհատի հոգին ու հոգեբանությունը: Այս իմաստով, թերևս, «Խաչագողի հիշատակարանի» Քավոր Պետրոսի կերպարը զուգահեռվում է շեքսպիրյան Ռիչարդ Երրորդի կերպարի հետ: Ինչպես որ վերջինս էր «նեղ բնության կողմից խաթարված» և իր ֆիզիկական «երանելի դաշնակությունից» զրկված լինելու պատճառով գիտակցաբար նետվում մարդկային կյանքի «դժնի ոճիրների մեջ»¹⁵, այդպես էլ Րաֆֆու հերոսն է մարդու բուն էությունը խեղաթյուրող հասարակության ոչ բանական օրենքներին հակադարձում նույնքան դաժան փիլիսոփայությանը. «Ես մի չար դևի նման պետք է պատժեմ մարդկանց անիրավությունները միայն անիրավություններով... Մարդիկ իրանք են ստեղծել ինձ նման պատիժը իրանց համար... Ես նրանց մեղքերի հրեշավոր ծնունդն եմ...»¹⁶: Սա արդեն ուղղակիորեն առնչվում է նաև դոստոևսկիական գլխավոր հարցադրմանը, որում էականն այն է, թե կա՞ արդյոք այնպիսի **նպատակ**, որն արդարացնում է ռճրագործին կյանքից զրկելու միջոցով պատժի ենթարկելը: Ֆ. Դոստոևսկու «Ռճիր և պատիժ» վեպի հայերեն հրատարակության վերջաբանում Լևոն Մկրտչյանը նկատում է, որ «Նպատակը երբեք չի արդարացնում միջոցը, եթե այդ միջոցը հանցագործությունն է»¹⁷: «Ռասկոլնիկովը մարդկանց բաժանում էր սովորական մարդկանց և ուժեղ մարդկանց, որ ընդունակ են «նոր խոսք» ասելու, - շարունակում է գրականագետը, - այդ իսկ պատճառով իրավունք ունեն թափելու սովորական մարդկանց արյունը»¹⁸: Ահա թե ինչու «Ռասկոլնիկովի գաղափարը՝ մի սպանությո-

13 Նեկրասովյան Ե., Րաֆֆի, «Արծազանք», Թիֆլիս, 1892, N 27 (4 մարտի):

14 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., «Սով. գրող», 1983, էջ 22:

15 Շեքսպիր Վ., Ընտիր երկեր 2 հատորով, հատ. 2, Եր., 1964, էջ 8:

16 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 5, Եր., «Սով. գրող», 1985, էջ 316:

17 Մկրտչյան Լ., Հանցագործությունը և մարդը, Դոստոևսկի Ֆ., Ռճիր և պատիժ, Եր., «Սով. գրող», 1980, էջ 679:

18 Նույն տեղում, էջ 682:

յուն և հազար բարի գործ, ամրապնդվում է մեծ անուններով», օրինակ՝ Նապոլեոնի, որոնք «այդ գաղափարին վսեմ երանգ են տալիս»¹⁹:

Այստեղ է, սակայն, որ Դոստոևսկին առաջ է մղում **խղճի** խնդիրը: Ռասկոլնիկովը, թեև Նապոլեոնի նման տարված չէ մարդկության համար բարիք գործելու վերացական երազանքներով, սակայն ցանկանում է օգնել որոշակի մարդկանց, որոնք ունեն դրա կարիքը՝ աղքատներին ու թշվառներին, այսինքն՝ պահպանելով բարոյական սահմանը: Այդ տեսանկյունից փոքր-ինչ այլ է Սվիդրիգայլովի կերպարը. նույնպես առաջնորդվելով «Եզակի չարիք և հարյուր բարի գործ» բանաձևով՝ նա չարիք է գործում առանց տառապանքի, ներքին պայքարի, **առանց խղճի խայթի**:

Բաֆֆու հերոսներից ոմանք ևս ստիպված են լինում չարիք՝ սպանություն գործել և դա փորձում են արդարացնել բնապատմական հիմքեր ունեցող անձնապաշտպանության գաղափարով: Ակադեմիկոս Մերգեյ Սարինյանը, Բաֆֆուն նվիրված իր մենագրության մեջ բերելով «Խենթը» վեպի հերոսներից մեկի՝ Սալմանի այն դիտարկումները, թե «Բոլոր արարածների մեջ մարդը միայն է, որ գազաններից ավելի անգութ և ավելի անիրավ կերպով է վարվում իր նմանների հետ»²⁰, նկատում է, որ «Ակամա վերհիշում ես Ֆ. Դոստոևսկու «Եղբայր Կարամազովներ» վեպի հերոսի դատողությունը հենց թուրքական բարբարոսությունների փորձից ելնող մարդկային դաժանությունների վերաբերյալ, թե «գազանը երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արտիստորեն, այնպես գեղարվեստորեն դաժան»²¹: Նման եզրակացության համար, անկասկած, հիմք են ծառայել ռուսական մամուլում տարածված տեղեկությունները թուրքական սարսափելի, աներևակայելի գազանությունների մասին: Ֆ. Դոստոևսկու՝ 1876 թ. հուլիս-օգոստոսի օրագրային գրառումներում այսպիսի ցնցող տողեր կան. «...ռուսական թերթերից մեկում կարդացի մի բովոդարուհի մոր մասին: Նրանց մոտ՝ Բուլղարիայում, մարդիկ կոտորվել են ամբողջ գավառներով: Այդ ծեր կինը փրկվել է գյուղերից մեկում և խելագարված թափառում է: Երբ նրան հարցուփորձ են անում կատարվածի մասին, նա չի խոսում սովորական բառերով. աջ ձեռքը դնում է այտին և սկսում է երգել ու հանպատրաստից չափածո տողերով պատմել այն մասին, որ ունեցել է տուն և ընտանիք, ունեցել է ամուսին, վեց զավակ, նրանցից ավագները ևս ունեցել են բալիկներ՝ իր փոքրիկ թոռնիկները: Գալիս են գիշատիչները, պատի տակ այրում ծերուկին, մորթում զավակներին, բռնաբարում փոքրիկ աղջնակին, իրենց հետ տանում մյուս աղջկան՝ գեղեցկուհուն, իսկ մանկիկների փորերը թափում են յաթաղաններով, ապա վառում են տունը, բոլորին շարտում բոցավառ կրակի մեջ, և այդ ամենը նա իր աչքով տեսել է և լսել երեխանների ճիչերը»²²: Եվ

19 Նույն տեղում, էջ 681:

20 **Սարինյան Ս.**, Բաֆֆի. գաղափարների և կերպարների համակարգը, Եր., ՀԳՄ հրատ., 2010, էջ 120:

21 Նույն տեղում, էջ 121:

22 **Достоевский Ф.**, Дневник писателя (за 1876 г.), «Сборник полных сочинений», т. 23, Л., «Наука», 1981, с. 100.

հումանիստ մեծ գրողը չի կարողանում զսպել աշխարհին, Եվրոպային, մարդկությանն ուղղված բողոքի իր ձիչը. «Օ՛, քաղաքակրթություն: Օ՛, Եվրոպա, ո՞ւմ շահերը այնքան կվնասվեն, եթե թուրքերին խստորեն արգելեն երեխաների աչքի առաջ մաշկազերծ անել իրենց հայրերին: Եվրոպական քաղաքակրթության այդ վերին շահերը, իհարկե, շուկաներն են, առևտուրը, ծովագնացությունը, ֆաբրիկաները. ի՞նչը կարող է ավելի բարձր լինել Եվրոպայի աչքում: Դրանք այնպիսի շահեր են, որոնց չի թույլատրվում ոչ թե մատով, այլ նույնիսկ մտքով դիպչել,- ոչ առանց դառն ու սարկաստիկ իրոնիայի բացականչում է նա:- Բայց «թող անիծվեն քաղաքակրթության այդ շահերը»: Այս բացականչությունն ինը չէ, այլ «Մոսկովսկիե վեդոնոստիինը», և ես ինձ պատիվ եմ համարում միանալու այդ բացականչությանը: Այո՛, թող անիծվեն եվրոպական քաղաքակրթության այդ շահերը և հենց ինքը՝ քաղաքակրթությունը, եթե այն պահպանելու համար պետք է մարդկանց քերթել»²³: Այս միտքը փոքր-ինչ այլ ձևակերպմամբ ընդգծել է նաև Հակոբ Օշականը. «Բարբարոսությունը նյութական ախորժանք մըն էր: Թուրքերը զայն վերածեցին իմացական հեշտանքի»²⁴:

Այս դեպքում խնդիրը, ինչպես տեսնում ենք, այլևս դուրս է գալիս մարդու անձնապաշտպանության շրջանակից և անցնում ժողովրդի, հատկապես փոքրաթիվ և պատմական հանգամանքների բերումով դիմադրության նվազ հնարավորություններ ունեցող ժողովուրդների պաշտպանության ոլորտ: Բնականաբար, Բաֆֆոու հերոսների հոգեբանությունն ու վարքագիծը պայմանավորված են հենց այդ դրդապատճառներով: «Սանվել» վեպի համանուն հերոսը սպանում է իր ծնողներին, որովհետև նրանք դավաճանել էին մեծագույն սրբություններին՝ ազգին ու հայրենիքին: «Դավիթ Բեկ» վեպում հայրենի Սյունիքի ազատագրության նվիրյալ գինվորի «երդման թուղթը» պարտավորեցնում էր՝ «Հարազատ եղբոր սուրը իր մերձավորի վրա պիտի բարձրանա, երբ որ նա դավաճանություն կգործե ուխտի և միաբանության դեմ: Հայրը պիտի չխնայե իր որդուն, և որդին ակնածություն չի պիտի անե հոր պատվին: Հայրենիքի սերը և նրա ազատության միտքը պետք է թագավոր լինի ամեն գործողությունների վրա, և ամեն ինչ պիտի զոհվի այդ ազատությունը գնելու նպատակին»²⁵: «Պատմական իրադարձությունների բարդ հանգույցներում գործող մարդկանց վարքը Բաֆֆին գնահատում էր պոզիտիվիստական պատմափիլիսոփայության հայեցակետից, որը և առաջադրում է էթիկական իր սկզբունքը ընդհանուրի և մասնավորի, էմպիրիկի ու հավերժականի հարաբերության մեջ»²⁶, - գրում է Ս. Սարինյանը: Հետևապես «Հայրենիքը բացարձակ է, անձնականը՝ ենթակայական, ով մեղանչում է բացարձակի դեմ,

23 Достоевский Ф., Дневник писателя (за 1877 г.), «Сборник полных сочинений», т. 25, Л., «Наука», 1983, с. 44.

24 Օշական Հ., նշվ. աշխ., էջ 421:

25 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 7, Եր., «Սով. գրող», 1985, էջ 272:

26 Սարինյան Ս., նշվ. աշխ., էջ 259:

թույլ է տալիս սկզբունքի աններելի շեղում, որն արժանի է պատժի...»²⁷, - եզրակացնում է գրականագետը: Բայց մի՞թե նույն համոզմունքը չի առաջնորդել Ֆյոդոր Դոստոևսկուն իր օրագրում հետևյալ տողերը գրելիս. «...եթե ես՝ ռուսս, ինձ զոհաբերում եմ հանուն պավոնի, որ կովում է թուրքի դեմ, թեկուզև նույն հավատի համար, նրան մաղթում եմ հաղթանակ թուրքի դեմ ամենևին էլ ոչ այն պատճառով, որ նա մուսուլման է, այլ միայն նրա համար, որ նա մոռթում է պավոնին...»²⁸: Կամ՝ «Լավ է մեկ անգամ մերկացնել սուրը, քան տառապել անվերջ»²⁹: Ի դեպ, հայտնի է, որ «Գրողի օրագիրը» գրվել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի գրեթե նախաշեմին, և, ինչպես նշում են օրագիրը կազմողներն ու ծանոթագրողները, այն «իրապես անհրաժեշտ «ստեղծագործական լաբորատորիա» է հանդիսացել, որում հասունացել ու նախապես փորձարկվել են գաղափարները, ինչպես նաև նախապատրաստվել է «Կարամազով եղբայրների» գեղարվեստական հայեցակարգը: 1877 թ. «Գրողի օրագրի» շատ հոդվածներ և նույնիսկ ամբողջական հրապարակումներ, պահպանելով իրենց ինքնուրույն հրապարակագրական նշանակությունը, միաժամանակ «ակամա» դարձել են դեպի վեպը տանող նախաքայլերը, նրա գաղափարական-գեղագիտական հիմքը»³⁰:

Ասացինք, որ Դոստոևսկու գեղարվեստական մտածողության համակարգում բացառիկ կարևորություն ունի ռճրագործի մեջ գլուխ բարձրացնող խղճի խայթի, ինքնադատապարտման շեշտադրումը: «Կարամազով եղբայրներ» վեպում Միտյան աղաչում է Աստծուն, որ չդատի իրեն, որովհետև, ասում է, «ես ինքս դատապարտել եմ ինձ»³¹, նաև նրա համար, որ չի ուզում «սրիկա լինելով սկսել» իր նոր կյանքը: Ներքին պայծառացման այդ պահին նա հանկարծ ըմբռնում է, որ Ալյոշան է «բարձր մարդը և ոչ թե Իվանը», որովհետև «խղճի հարց է այստեղ, գերագույն խղճի հարց»³²: «Ոճիր և պատիժ»-ում ևս այնքան անկեղծ ու տեսանելի են Ռասկոլնիկովի հոգեկան ինքնակեղեքման ապրումները, որ նույնիսկ քննիչ Պորֆիրի Պետրովիչն է հասկանում, որ նա թեև կարող էր խուսափել պատժից, բայց և այնպես, չգրված մի օրենքով **չի կարող դիմադրել խղճի դատաստանին...**

Բաֆֆու «Խենթը» վեպում նույնպես «չար, դավադիր, բախտախնդիր կեղեքիչ» Թոմաս էֆենդու մեջ հանկարծակի ծագած սիրո ազդեցությամբ գլուխ է բարձրացնում **զղջման ու խղճի խայթի** տանջալի զգացումը, որից հավածվելով՝ ի վերջո նա իրեն ցած է նետում քարաժայռից: Բայց ահա թե ինչպես է նա պատահաբար իրեն փրկության հասած Վարդանի առջև «արդարացնում» իր այդ սարսափելի արարքը՝ աղաչելով, որ վերջինս ավարտին

27 Նույն տեղում, էջ 187:

28 Достоевский Ф., Дневник писателя (за 1876 г.), с. 125-126.

29 Достоевский Ф., Дневник писателя (за 1877 г.), с. 101.

30 Նույն տեղում, էջ 339:

31 Դոստոևսկի Ֆ., Կարամազով եղբայրներ, հատ. 2, էջ 124:

32 Նույն տեղում, էջ 372:

հասցնի իր սպանությունը. «...ձգեցեք իմ դիակը Ալաշկերտի անապատների մեջ, որ ես ինքս անայի դարձրի, թող գազանները գիշատեն նրան,- ասում է նա:- ...ես Հայաստանի հողին արժանի չեմ, իմ գարշելի դիակը կաղծե նրա սրբությունը...»³³: Քննվող հարցադրման տեսանկյունից ուշագրավ է նաև «Խաչագողի հիշատակարանը» վեպի գլխավոր հերոս Քավոր Պետրոսի հոգում կատարված ճակատագրական շրջադարձը դեպի գործած ոճիրների համար տանջալից գղջման, մեղքերի թողության և բարոյական վերադարձի ձգտումը: Տարիներ անց արդեն «Կայծեր»-ում, հայտնվելով հայրենի Ռշտունիքում, նա դառնորեն խոստովանում է. «Մի՞թե երկինքը կարող էր բովանդակել իր մեջ այնքան գթություն, այնքան ողորմածություն, որ բավական լինե՞ր ներելու ինձ նման եղեռնագործին...»³⁴: Պարզվում է՝ նրա ներքին այդ կտրուկ շրջադարձը պայմանավորված էր նրանով, որ նախկին արկածախնդիրն ու ոճրագործը գղջման հզոր ալիքի ազդեցությամբ Դմիտրի Կարամազովի նման հանձն էր առել «մերկանալ **հին մարդը** և, իբրև նոր մարդ, նոր հոգով և նոր եռանդով գործել՝ դեպի ազնիվը և դեպի լավը»³⁵:

Նշված երևույթները քննության առնելով՝ ակադեմիկոս Ս. Սարինյանը գրում է. «Առհասարակ ինձ թվում է, որ Բաֆֆու որոշ ստեղծագործություններում, մասնավորապես «Խաչագողի հիշատակարանում», մարդկային բիոհոգեբանական բնագոյների դաժան ու մաղձոտ բացահայտումները ուղղակի ազդակներ ունեն Դոստոևսկուց»³⁶:

Ե՛վ Ֆ. Դոստոևսկին, և՛ Բաֆֆին իրենց վերը հիշատակված բարդ ու առեղծվածային հերոսների ներքին հոգեբանական անցումները փորձում են մեկնաբանել նաև առավել խորքային՝ տիեզերական ազդակների ներգործությամբ: Կարալիս Սուրենյանը նշում է, որ Ֆ. Դոստոևսկին «հոգեբանության մեջ ստեղծեց ու կիրառեց «հարաբերականության տեսությունը»՝ ճանապարհ բանալով դեպի մարդկային հոգու անհունը, այնպես, ինչպես Էյնշտեյնը բնագիտության մեջ արեց այդ հեղաշրջող գյուտը և անհունորեն ընդլայնեց մարդու պատկերացումները՝ իրենից դուրս գտնվող բնության, տիեզերքի մասին»³⁷: Նույնքան բնորոշ են նաև Բաֆֆու «Կայծերի» հերոսներից Ֆարիատի խոհերը. «Եվ այդ տարբեր, զանազան ցեղերին պատկանող անձինքների մեջ կարծես թե տարածված էր մի գաղտնի թել, որ կապում էր բոլորի սրտերը, բոլորի կամքերը միմյանց հետ: Բայց ո՞ւմ ձեռքումն էր գտնվում այդ թելի ծայրը, ո՞վ էր դարձնում բոլորի կամքերը դեպի մի որոշ նպատակ: Դա որպես ինձ թվում էր, այն գերագույն տիրապետող ոգին էր, որ ինքը գոյություն ունի անհայտության մեջ, որ իրան պահում է անմատչելի, իսկ իր հզոր, աներևույթ

33 **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հատ. 4, Եր., «Սով. գրող», 1984, էջ 368:

34 **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., «Սով. գրող», 1986, էջ 268:

35 Նույն տեղում, էջ 268-269:

36 **Սարինյան Ս.**, նշվ. աշխ., էջ 121:

37 **Սուրենյան Կ.**, Խղճի աղաղակ, էջ 626:

ձեռքով կառավարում է մարդկանց սրտերը, մարդկանց մտքերը և նրանց ուղղություն է տալիս...»³⁸:

Դոստոևսկու և Րաֆֆու ստեղծագործական զուգահեռների խնդիրը քննելիս կարևոր է նկատել նաև, որ «Կայծերի» հերոսներից յուրաքանչյուրը մարմնավորում է ժողովրդի և հասարակության համար լավագույն ապագայի կերտման ուղիներից մեկը: «Կարամազով եղբայրների» հանրահայտ հերոսների՝ Դմիտրիի, Իվանի ու Ալյոշայի նման «Կայծերի» Կարոն, Ավանն ու Համրը ևս իրենց բնավորությամբ ու մտածելակերպով նախանշում են սեփական ազգի ու հասարակության հետագա զարգացման տարբեր ուղիները:

Այս ամենը բնականաբար թույլ է տալիս մեզ խոսել երկու նշանավոր գրողների ստեղծագործական մտածողության ոչ միայն ազգային, այլև համամարդկային չափանիշների և արժեքայնության մասին:

2. Դոստոևսկի և Եղիա Տեմիրձիպաշյան

Ինչ վերաբերում է Ֆ. Դոստոևսկի-Ե. Տեմիրձիպաշյան զուգահեռներին, ապա այստեղ դիտարկելի է առնվազն երկու կարևորագույն հանգամանք՝ գրողների անհատականության և կենսագրության ընդհանրություններն ու **տառապանքի փիլիսոփայության գերակայությունը**, որոնք, ըստ էության, իրենց խոր ազդեցությունն են թողել նրանց ստեղծագործության վրա: Կարպիս Սուրենյանը նկատում է. «Անսովոր է թվում վիպագիր Դոստոևսկու ստեղծած աշխարհը, և նրա արվեստը՝ բացառիկ: Սակայն նրա կյանքն էլ անսովոր ու բացառիկ եղավ: Ճակատագիրն ամենադաժման հարվածները տվեց նրան, և նա, հանձարով օժտված մարդ, անցավ մեծագույն փորձությունների միջով, որոնք կարող են վիճակվել մարդ էակին»³⁹: Ասվածը հիմնավորելու համար նա թվարկում է «բարոյական մաքրության տիպար» մոր վաղահաս և «շատ սիրելի» ավագ եղբոր մահը, ապա՝ մեծ պարտքերը, մշտապես նյութական նեղության մեջ լինելը, աղքատության ճնշումը, որից ազատվելու համար ստիպված էր նույնիսկ «իր ձմեռային վերարկուն գրավ դնել», մի քանի անգամ գնալ արտասահման: Այդ ամենին ավելանում է նաև անբուժելի հիվանդությունը՝ «անողոք ընկնավորությունը, որի դաժման նոպայից հետո մի շաբաթ չէր կարողանում ձեռքը «գրիչ վերցնել»: Այդուհանդերձ, «ստորացված ու անարգված գրողը, տառապանքի ամենախոր վիհերով անցած մարդասերը», չնայած «կրոնափիլիսոփայական ու սոցիալ-քաղաքական հարցերում իր տանջալի տատանումներին», կարողացավ իր նշանավոր երկերում «պեղել առօրյա կյանքի փաստերի հոգեբանական և փիլիսոփայական խորքը, մինչև

38 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 368:

39 Սուրենյան Կ., Խղճի աղաղակ, էջ 626:

վերջ պարզել մարդկային արարքների բուն շարժառիթները, ի հայտ բերելով թե՛ր ու դեմ գաղափար-գազցումների պայքարը թե՛ անհատ մարդու հոգում, թե՛ մարդկային փոխհարաբերությունների մեջ»⁴⁰:

Բայց մի՞թե նույնը չէր նաև Եղիա Տեմիրձիպաշյանի ճակատագիրը: Նա ևս վաղ կորցրեց իր սիրելի ծնողներին ու կրտսեր եղբորը, մնաց միայնակ պապական դատարկված տան մեջ: Մեծ համբավի տեր, ճանաչված մանկավարժ, հրապարակագիր, իմաստասեր, լրագրող և խմբագիր, «գերզգայուն արձակագիր քերթող» (Հրանտ Ասատուր) Եղիա Տեմիրձիպաշյանը, որի դերը հայ գրականության մեջ, գրականագետ Ստեփան Թոփչյանի կարծիքով, «նույնն է, ինչ Էդգար Պոլի ու Շառլ Բոդլերի դերն իրենց և համաշխարհային գրականության մեջ»⁴¹, ապրեց չքավորության մեջ, ստեղծագործեց՝ «Գիշերն արտասուելով և արին թքնելով...»⁴²: Ե. Տեմիրձիպաշյանը ևս տառապում էր նյարդային ծանր հիվանդությամբ: Բժիշկների խորհրդով ստիպված էր ուղևորվել արտասահման՝ Շվեյցարիա, Ավստրիա, Հունգարիա՝ բուժվելու, սակայն ապարդյուն: Այդուհանդերձ, չնայած բժիշկների արգելմանը, շարունակում էր քրտնաջան աշխատել: Նրա նպատակը հայ իրականության մեջ եվրոպական առաջադեմ գաղափարների, գեղագիտական ու գեղարվեստական միտումների տարածումն էր, ջանք չէր խնայում ազգային լուսավորության, առողջ ու ստեղծագործ սերունդների դաստիարակության, լավագույն ապագայի կերտման համար: Բայց այդ ամենի դիմաց թե՛ Տեմիրձիպաշյանը, թե՛ Դոստոևսկին շատ հաճախ դեմ էին առնում անընթացության պատին, արժանանում անհիմն վիրավորանքների, մինչև իսկ զրպարտանքների: Նույնիսկ ժամանակի հայտնի գրական դեմքերի շրջանում տարածված էր այն միֆը, թե Դոստոևսկին վեր է դասում իրեն նյուններից, հատուկ վերաբերմունք է պահանջում իր նկատմամբ: Նույն կերպ Եղիա Տեմիրձիպաշյանին ևս մեղադրում էին եսասիրության, ինքնագովության, հիվանդագին փառասիրության մեջ, ինչը նրա կյանքը կատարյալ ողբերգության, դժոխքի էր վերածել: «Երկնատրին ես ի՞նչ արդեօք կը պարտիմ, // Որ այս անլուր տանջանաց զիս կը մատնէ»⁴³, - խոր հուսահատության մի պահի գրել է նա «Մահակենդանություն» քերթվածում: Անմարդկային տառապանքը նաև Ֆյոդոր Դոստոևսկու դառն ճակատագրի անբաժանելի մասն էր: Սակայն նրանք երկուսն էլ հանդգնված էին «Գրողի օրագրում» Դոստոևսկու այն հանձարեղ ձևակերպման մեջ, թե «Ճշմարտությունը միայն տառապանքով է ձեռք բերվում»⁴⁴:

Նախախնամությունը, սակայն, որոշել էր, ի հեճուկս այդ ամենի, գոնե կյանքի վերջին տարիներին սփոփանքի մի պատուհան բացել նրանց տառա-

40 Նույն տեղում, էջ 628-630:

41 Թոփչյան Ս., Կերպ և իսկություն, Եր., «Սով. գրող», 1987, էջ 61:

42 Ասատուր Հ., Դիմաստուներ, Կ. Պոլիս, «Կ. Քէշիշեան որդի», 1921, էջ 210:

43 Տեմիրձիպաշյան Ե., Հրայր ընդհին, Իսթանբուլ, «Ժամանակ», 2008, էջ 222:

44 Достоевский Ф., Дневник писателя (за 1877 г.), с. 95.

պանքների առջև: Եվ, իսկապես, Աննա Մսիտկինյան Ֆյոդոր Դոստոևսկու, Էլեն Նիսընը Եղիա Տեմիրձիպաշյանի համար իսկական «պահապան հրեշտակներ» եղան. կարողացան պահել-պահպանել ու սփռվել նրանց տառապած հոգին ու սիրտը:

Ճակատագրի հարվածները, այնուամենայնիվ, անգոր են երկու վիթխարի գրական անհատականությունների պատմական արդարացի գնահատականի դիմաց: Ֆյոդոր Դոստոևսկու հանձարեղությունը վաղուց արդեն կասկած չի հարուցում ողջ աշխարհում: Իսկ Եղիա Տեմիրձիպաշյանի կյանքն ու գործը բոլոր տեսակի նախապաշարմունքներից ազատվելուց հետո, համոզված ենք, իր արժանի տեղը կգրավի հայ գրականության պատմության մեջ: Մի բան, որ կանխատեսել էր հայ ազգային-գրական մեծագույն գործիչ Գրիգոր Զոհրապը՝ դեռևս գրողի կենդանության օրոք՝ 1892 թվականին գրելով. «Բայց ետոթեան վրայ կեդրոնացած իր իմաստասերի խոկումները եթէ շահագրգիռ չերեւին նիւթական ու դրական մեր ժամանակի մարդոց, գոնէ մեզմէ վերջը եկողները պիտի փնտռեն իր գործերը. իր վարանումները, որոնք ծաղրելի հակասութիւններ կը թուին մեզի, պիտի արդարանան իբրեւ ճշմարիտ իմաստունի մը խարխափումները»⁴⁵:

Եզրակացություններ

1. Մեծ է Ֆյոդոր Դոստոևսկու անհատականության և ստեղծագործության ազդեցությունը ինչպես համաշխարհային գրականության, այնպես էլ հայ գրական հանրաձանաչ դեմքերի, մասնավորապես՝ Րաֆֆու և Եղիա Տեմիրձիպաշյանի վրա, որի զանազան դրսևորումներն ու հետքերը դեռևս կարող են առավել հիմնավոր ուսումնասիրության:

2. Ներկա ուսումնասիրությունը թույլ է տալիս խոսել Ֆ. Դոստոևսկուց Րաֆֆու և Ե. Տեմիրձիպաշյանի ոչ այնքան ուղղակի, որքան անուղղակի ազդեցությունների կամ ստեղծագործական զուգահեռների մասին:

3. Նշված զուգահեռներում առանցքային են ազգայինի և համամարդկայինի փոխհարաբերության, ինչպես նաև այդ համատեքստում արվեստի ու գաղափարի, ազգային պատմության, ապագայի կերտման ուղիների որոնման, ոճի, պատժի, խղճի և մարդկային հարաբերությունների հիմնավանդիրները:

4. Եղիա Տեմիրձիպաշյանի պարագայում քննարկելի են նաև Ֆ. Դոստոևսկու և արևմտահայ ինքնատիպ գրողի-իմաստասերի-կրթամշակութային գործչի էության և կենսագրության ընդհանրությունները, մասնավորապես՝ տառապանքի փիլիսոփայությունը, որոնք իրենց խոր ազդեցությունն են թողել նրանց ստեղծագործության վրա:

45 Զօհրապ Գ., Եղիա Տեմիրձիպաշեան, «Բիզանդիոն», Կ. Պոլիս, 1892, N 124 /26 Յունուար/:

5. Նշված հանգամանքները հինք են տալիս խոսելու Ֆյոդոր Դոստոևսկու, Բաֆֆու և Եղիա Տեմիրճիպաշյանի ստեղծագործական մտածողության ոչ միայն ազգային, այլև համամարդկային չափանիշների և արժեքայնության մասին:

Պետրոս Հ. Դեմիրճյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է դասական և ժամանակակից գրականությունը: Հեղինակ է գրականագիտական 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական հոդվածների:

Էլ. հասցե՝ pdemirchyan@mail.ru

Summary

CREATIVE PARALLELS: F. DOSTOEVSKY-RAFFI-E. TEMIRCHIPASHYAN

To the 200th anniversary of the birth of Fyodor Dostoevsky

Petros H. Demirchyan

Doctor of Sciences in Philology

Keywords – Dostoevsky, Raffi, Temirchipashyan, parallels, national, universal, diary, crime, punishment, conscience, betrayal, suffering.

The influence of Fyodor Dostoevsky’s personality and his work on the development of Russian and world literary-scientific thought is enormous. Of course, Armenian literature is not an exception with its two historically formed branches The article refers to the case of two original authors representing the above-mentioned branches of Armenian literature: **Raffi (Hakob Hakobyan, s/o Melik) and Yeghia Temirchipashyan**, who in that sense, we consider, need more comprehensive, complete elucidation. At the heart of the monitoring mainly is the problem of the relationship between the national and the universal of literature, which gives the opportunity to examine the work of a national writer in interaction with world great minds. There can be no doubt that Raffi’s famous works, being the most powerful expression of the life and destiny of the Armenians, provided him with the right of being called “The Armenian

national novelist” (A. Chopanyan). Nevertheless, Raffi’s work was also viewed in the broader context of the world literature of his time. He created characters, which, under the national image and essence expose the soul and psychology of the human being in general. In this sense, the character Godfather Petros of the “The Diary of a Khachagogh (Cross-thief)” with an equally cruel philosophy that contradicts the irrational laws of a society that undermines the very essence of the human being: “I am like an evil spirit must punish people’s injustices only with injustices...” directly relates to Dostoevsky’s question in which the essential thing is whether there is a **goal** that justifies the right to punish the perpetrator by depriving him of his life. F. Dostoevsky, by Raskolnikov, the hero of the novel “Crime and Punishment” raises the issue of **Conscience**. Some of Raffi’s heroes are also forced to commit evil – murder and they try to justify it with the idea of self-defense having a natural historical basis. However, in many cases, the problem goes beyond that and enters the field of defense of the people and the homeland. In the novel “Samvel”, Samvel kills his parents because they betrayed the most important sacred things – the nation and the homeland.

In creative parallels of F. Dostoyevsky and Raffi the issues of crime, punishment, conscience and human relations, national history, search for ways of the future are also crucial.

As for F. Dostoevsky-Y. Temirchipashyan creative parallels, at least two key factors can be considered here: the similarities between the personal nature and biography of the writers and the dominance of the **Philosophy of Suffering**, which, in fact, had a profound effect on their work. But divine providence finally decided, as if in spite of all this, at least in the last years of the life of great writers, to open a window of consolation before their sufferings. And just as Anna Snitkina for Fyodor Dostoevsky, likewise Ellen Nissen for Yeghia Temirchipashyan were real “guardian angels”, they were able to keep, preserve and comfort their suffering souls and hearts.

The mentioned circumstances, as a whole, give grounds to speak about not only the national, but also the universal standards and values of the creative thinking of F. Dostoevsky, Raffi and Ye. Temirchipashyan.

ТВОРЧЕСКИЕ ПАРАЛЛЕЛИ: Ф. ДОСТОЕВСКИЙ – РАФФИ – Э. ТЕМИРЧИПАШЯН

В связи с 200-летием со дня рождения Федора Достоевского

Петрос А. Демирчян
Доктор филол. наук

Ключевые слова - Достоевский, Раффи, Темирчипашян, национальное, параллели, общечеловеческое, дневник, преступление, наказание, совесть, предательство, страдание.

Огромно влияние личности и творчества Федора Достоевского на развитие русской и мировой литературно-научной мысли. Армянская литература с ее двумя исторически сложившимися ветвями не является исключением. В статье речь идет о двух оригинальных авторах, представляющих вышеупомянутые ветви армянской литературы – Раффи (Акоп Мелик-Акопян) и Егия Темирчипашяна, творчество которых в этом смысле, по нашему мнению, нуждается в более всестороннем и полном освещении.

В основе нашего исследования лежит главным образом вопрос о соотношении национального и общечеловеческого в литературе, что и дает возможность рассматривать творчество любого национального писателя во взаимосвязи с творчеством авторов с мировыми именами. Несомненно, знаменитые произведения Раффи, являющиеся литературным образцом описания жизни и судьбы армянского народа, обеспечили ему право называться «национальным романистом» (А. Чопанян). Однако творчество Раффи рассматривалось и в более широком контексте мировой литературы его времени. Он создал образы, отражающие национальный облик и сущность армянина, раскрывающие душу и психологию человека в целом. В этом смысле образ Кавор Петроса (Крестного Петра) в романе «Дневник хачагоха (крестокрада)» с его жестокой философией: «Подобно злему демону, я должен наказывать несправедливости людей только несправедливостями...», напрямую связан также с главной постановкой вопроса Достоевского, суть которого заключается в следующем: есть ли цель,

оправдывающая право наказать преступника лишением жизни? Ф. Достоевский в образе Раскольникова, главного героя романа «Преступление и наказание», поднимает вопрос о Совести. Некоторые герои Раффи также бывают вынуждены совершать зло, убийство. И они пытаются оправдать это идеей самозащиты. Однако во многих случаях проблема выходит за рамки этого. В романе «Самвел» главный герой убивает своих родителей за то, что они предали самое главное и святое – Nation и Родину.

Ключевыми вопросами в творческих параллелях Ф. Достоевский – Раффи являются также вопросы отечественной истории, поиска будущего, преступления, наказания, совести и человеческих отношений.

Что касается творческих параллелей Ф. Достоевского и Е. Темирчипашяна, то здесь можно рассмотреть как минимум два важных фактора: сходство между личностной - человеческой сущностью и биографиями писателей, а также преобладание в их творчестве философии Страдания, которая, по сути, оказала глубокое влияние на их творчество. Но божественное провидение в конце концов решило, по крайней мере в последние годы жизни великих писателей, открыть окно утешения перед их страданиями. И Анна Сниткина для Федора Достоевского, и Элен Ниссен для Егии Темирчипашяна были их настоящими «ангелами-хранителями», которые сумели сохранить и утешить их страдающие души и сердца.

Названные обстоятельства в целом дают основание говорить не только о национальных, но и об общечеловеческих критериях и ценностях творческого мышления Ф. Достоевского, Раффи и Е. Темирчипашяна.

REFERENCES

1. **Asatur H.**, Dimastwerner, K. Polis, “K. K‘eshishyan vordi”, 1921 (**In Armenian**).
2. „Armyanskie belletristi,, , t. 1, M., “Tipo-litogr. I. N. Kushnerev” , 1893 (**In Russian**/).
3. **Bashalean L.**, Tast‘aevski ew yur gordzern, K. Polis, “Masis” , N 3754, 1885 (**In Armenian**).
4. **Dostoevski F.**, Karamazov yeghbayrner, hat. 1, Yer., “Sov. grogh” , 1983 (**In Armenian**).
5. **Dostoevski F.**, Karamazov yeghbayrner, hat. 2, Yer., “Sov. grogh” , 1984 (**In Armenian**).
6. **Dostoevski F.**, Vochir ew patizh, Yer. “Sov. grogh” , 1980 (**In Armenian**).
7. **Dostoevski F.**, Dnevnik pisatelya (za 1876 g.), Sbornik polnix soch‘ineniy, t. 23, L, “Nauka” , 1981 (**In Russian**).

8. **Dostoevski F.**, Dnevnik pisatelya (za 1877 g.), Sbornik polnixh soch'ineniy, t. 25, L, "Nauka", 1983 (**In Russian**).
9. **Zohrap G.**, Eghya Temirchipashyan, K. Polis, "Byuzandion", N 124, 1892 /**In Armenian**).
10. **Temirchipashyan E.**, Hrayrk' mutin, Istanbul, "Zhamanak", 2008 (**In Armenian**).
11. **T'umanyan H.**, Yerkeri zhoghovatsu 4 hatorov, hat.4, Yer., "Hayastan", 1969 (**In Armenian**).
12. **T'op'ch'yan S.**, Kerp ew iskutun, Yer., "Sov. grogh", 1987 (**In Armenian**).
13. **Mkryan M.**, Grakanutyun patmutyan harts'er, Yer., "EPH hrat.", 1982 (**In Armenian**).
14. **Nekrasova E.**, Raffi, Tiflis, "Ardzagank'", N 27, 1892 (**In Armenian**).
15. **Shek'spir V.**, Entir yerker 2 hatorov, hat. 2, Yer., "Hajpethrat", 1964 (**In Armenian**).
16. **Chopanyan A.**, Yerker, Yer., "Sov. grogh", 1988 (**In Armenian**).
17. **Sarinyan S.**, Raffi. gaghap'arneri ew kerparneri hamakargë, Yer., "HGM hrat.", 2010 (**In Armenian**).
18. **Varuzhan D.**, Raffi, K. Polis, "Amsorya teghekatu", N 27, 1913 (**In Armenian**).
19. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 2, Yer., "Sov. grogh", 1983 (**In Armenian**).
20. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat. 4, Yer., "Sov. grogh", 1984 (**In Armenian**).
21. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat. 5, Yer., "Sov. grogh", 1985 (**In Armenian**).
22. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat. 6, Yer., "Sov. grogh", 1986 (**In Armenian**).
23. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat. 7, Yer., "Sov. grogh", 1985 (**In Armenian**).
24. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat.11, Yer., "Nairi", 1991 (**In Armenian**).
25. **Öshakan H.**, Yerker, Yer., "Sov. grogh", 1979 (**In Armenian**).
26. **Fadeyev A.**, Kommunisticheskoe vospitanie trudyash'ikhsya i sovetskoe isskustvo, Za tridts'at' let, M., "Sov. pisatel'", 1959 (**In Russian**).